—«Գացէք ասէք, կասէ, այն շանը, եթէ կախաղան չունի, թող յղէ Ալաշկերտից իմ կախաղան բերել տայ»։

Մահմուտ կրկին լուր յղեց թէ «քեզ պիտի ազատեմ. սակայն նա չհաւատաց, իւր տեղից չը շարժեցաւ։

—«Իմ ճանապարհը Սարայ չը գնար, ուղիղ դէպի կախաղան է, եթէ տանիք, սիրով կը գնամ, ասաց»։

Խալիլը քաշքշելով տեսանը տարին, ուր մտած տեղն աչքերը գոցեց . . . ։

Այն օր Խալիլ Պայազէտի բերդից կախուած կը շարժէր շատ մի չարչարանք և անարգանք կրելէ յետոյ։

Այդպէսով Մահմուտ կը լուծէ անմեղ անձանց վրէժը և մասնաւորապէս Սահրատի։

Սահրատի տուն այժմ Արարատայ Զամբլու գիւղն է, կասեն և միջակ աստիճանի մէջ կապրին թոռները։

---

3. ԶՈՒՐՈՒԿ

Զուրուկ կը գտնուի $^1/_2$ ժամ արևելս Դաւոյ՝ $^1/_2$ ժամ յարևմուտս Զլկանի գիւղին, այս երկու գիւղորէից մէջ Շեռեանայ ձախ ափին վերայ 23—25 տուն բնակութիւն ունեցող մի գիւղ է Ջեռբկանայ և Խոփուզայ գետակաց ի Շեռեան խառնուրդի միջավայրը. բնակիչներն քուրդ են, որք երկրագործութեամբ կը պարապին. ունին արգասաբեր արտօրայք, դրիւք ևն. են նման Դաւոյ գիւղի։ Գիւղս դեռ կը կրէ Եկեղեցւոյ աւերակի և գերեզմանատան հետքեր. սա ևս 1822 թուին ամայացած է հայ բնակիչներէ, որք 40—60 տուն կը համարուէին։